

ԱՐԾ. ՇԱՀՆԱԳԱՐԵԱՆ. «ԵԱՀԻԱՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ» (ՊԱՏՄԻԱԾՔ-ՆԵՐ) ԵՐԵՒԱՆ, 1910

Պ. Շահնազիանը երիտասարդ գրող է և առաջին անգամ հանդէս է գալիս իր պատմուածքների ժողովածուով, որոնք թուով ութ հատ են, բոլորն էլ գիւղական կեանքից վերցրած:

Երիտասարդ հեղինակը իր պատմուածքների մէջ աչքի է ընկնում որպէս լաւ ծանօթ գիւղական միջավայրի կեանքին ու սովորութիւններին. սակայն նա հարազատօրէն չի վերարտադրում այն, ինչի որ մօտենում է. Նրա նկարազրութիւնները անփայլ են, չունեն կենդանի գունեղ պատկերաւորութիւն և խոր դիտողականութիւն. **Պ. Շահնազարեանն իր գրուածքներում աւելի շուտ քննադատ է քան նկարագրող, դատաւոր՝ քան փաստերով զինուած փաստաբան: Նա հերոսի մէկին ուզում է դուրս բերել իրեւ «ինեղճ» մարդ, իսկ միւսին իրեւ «անօրէն վաշխառու».** բայց փաստեր չի տալիս դրանց համար, գեղարուեստարէն նըկարագրելով չի ապացուցանում առաջինի խեղութիւնը և երկրորդի անօրէնութիւնը, այլ միայն բաւականանում է չոր ու ցամաք պատմելով, որ այս ինչը խեղճ մարդ է, այն ինչը անօրէն և այլն: Առանց փաստերի, առանց ընթերցողներին ծանօթացնելու իր հերոսների բնորոշ յատկութիւնների հետ, պ. Շահնազարեանը եարևիկներ է կացնում Սերոբի, Աւոի, Մանուկ աղայի և միւսների ճակատին:

Պ. Շահնազարեանը լաւ կանէր, եթէ միայն բաւականանար գեղարուեստարէն նկարագրելով և փաստեր արձանագրելով, առանց դատավճիռներ ու ցաւակցական ներբողներ կարդալու: Նրա պատմուածքների մէջ զուգընթացարար միշտ երեւում են պատմիչը և դատաւորը, իսկ դրանց լայն ստուերի տակ միշտ ծածկուած է մնում գունատ նկարագիրը: **Պ. Շահնազարեանը զիխաւորապէս գրում է արարատեան բարբառով, և միայն տեղ-աեղ գրական խառնելով, որը ծանրացնում է աւելի, առանց այն էլ ծանր ոճը:**

«Սերոբենց ածերը» պատմուածքը տպաւորիչ է, բայց տեղ տեղ գեղարուեստական չափը ընկնում է: Լաւ է «Մարանի գեղապետը», թէև գարձեալ գեղարուեստական ամբողջութիւնը չի պահպանուած: «Մացակի լոշը» սիւժենը լաւ է, բայց լաւ չէ մշակած: Կենդանի պատկեր է «Կարմիր ճիպուարը»: Լաւ է նաև «Քրիստոսի սիրուն» աւանդութիւնը:

Ընդհանուր տպաւորութիւնը այն է, որ պ. Շահնազարեանը սիրում է թշուառների կեանքը նկարագրել (և շատ էլ լաւ է անում):

երեսում է, որ պարոնը չնորհք ունի. Ցնում է, որ նա կեանքի փորձերով և իոր դիտողականութեամբ ուսումնասիրէ կեանքը և դրանով զարգացնի իր փոքրիկ տաղանդը:

Խորհուրդ կտայինք պլ. Շահնազարեանին ուսումնասիրել Գլեբ Ուսպենսկուն, իբրև նարօդնիկ գրողի:

Ձ.-Մ.



ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Գ. Մելիք—Կարագեօղեան. Մարդու կազմուածքը, կազմալուծուող և այլ պատկերներով. Թիֆլիս 1905.

Մ. Ալավերճյան. Տես্ত Ա. Շ. Գրիբոյետա, են. Ալ. Չավչավաձե. Հ. Պ. Բ. 1910.

Malachia Ormanian. L'edilise Arménienne. Paris 1910.

Ժամանակաւոր կանոններ Հայոց թեմ. Հոգևոր Դպրանոցների մասին. 1910 Թիֆլիս

Avetis Aharonian, Bilder aus Türkisch—Armenien, Übersetzt von Artak v. Smbatianz. Etschmiadis 1910

Եղիա տէր Հայրապետեան. Զանգէզուր. Լէգէնդական պօէմա, Գորիս, 1910

Տեղեկագիր Թիֆլիսի Հայ-գիւղատնտեսական և տնայնագործական ընկերութեան 1909—10 Թիֆլիս 1910:

Վ. Ա. Բառգիրք լատին և օսարազգի դարձուածների Թիֆլիս 1911 գ. 75 կ.

